

ԱՇՈՏ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱԽԱՆ
(Շիրակի թեմի առաջնորդ)

ԱՅԼԱՍԵՌՎԱԾ ԿՐՈՆ ✓

(Հայոց յեկեղեցու բարեփոխութեան առթիվ)

ՄԱՍՆ ԵՌԵՋԻՆ

ՀՐԵՏՈՐԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Տպարան Գալբաղզործկոմի Տեղական Տնտես. բաժնի
1924 թ. Լենինական

THE UNIVERSITY OF CHICAGO

1914

5760

ԱՇՈՏ ԱՐՔ-ԵՄԻՍԿՈՄՈՍ ՇՄԻՅԱՆ
(Շիրակի թեմի առաջնորդ)


ԱՅԼԱՍԵՌՎԱԾ ԿՐՈՆ

(Հայոց յեկեղեցու բարեփոխութեան առթիւ)

14792

A 23815

ՄԵՆ ԵՌԱՋԻՆ





Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներկա պատմական փոխանցման այս ահավոր շրջանում, յերբ քաղաքական լավագույն կյանքի ձգտող ազգեր, իրենց ներկա ցավատանջ հոգսերով ծանրաբեռնված, ճրգնում և տքնում են իրենց ապագա մարդավայել կյանքը ձևակերպելու կարևոր աշխատություններ կատարել, քաղաքական և քաղաքացիական կրկնակի խոհականություններ նախատեսնում են, վոր ժամանակիս՝ նմանը չըլլված ու չը տեսնված շարժումներից հետո պետք է սկսի բյուրեղացումը նոր մարդկություն, նորագույն ըմբռնումների և նորագույն գոյակենցաղի:

Հայերը, ինչպես պատմական տվյալներով և իդեալներով մի միավորություն, կրոնի և յեկեղեցու համար ամենաթանգ գոհաբերություն են ունեցած դարերի ընթացքում. ամեն մի դարաշրջանում տիրող հասկացողություն և ըմբռնումների շարքով հայոց յեկեղեցին և յեկեղեցու պաշտոնեյությունը հոգածու յե յեղած հայ ժողովրդի հոգևոր և բարոյական կյանքի զարգացման և բարձրացման, իսկ ներկայումս այդ պաշտոնեյությունն անբավարար հետաքրքրություն և ցույց տալիս այդ կողմից, թողնելով յեկեղեցին իր հնամաշ վիճակի մեջ:


Անհատը և ժողովուրդն ազատ են Սորհրդային իշխանություն բարեխնամ հովանավորության տակ խղճի և կրոնի ինքնիշխանական պատենշների տիրապետության սահմանների մեջ: Ազատ են սիրելու և պաշտելու իրենց

պաշտամունքի առարկան: Բայց դժբախտաբար ներկայումս
 յեկեղեցին չունի դյութիչ հատկութիւն, ներկա դարու
 վոգուն և գիտութեան համապատասխան բեմից հնչող
 ազդու և գորավոր ձայն՝ լուսավորելու հայ ժողովրդի
 խավարապատ հոգեկան աշխարհը և թույլ չը տալու, վոր
 մթութիւնն ու սնոտիապաշտութիւնները չոքած մնան
 նրա հոգեկան ներքին աշխարհի մեջ: Թույլ չը տալու, վոր
 ուրվականներ շրջեն նրա շուրջը և գոյութիւն չունե-
 ցող դեերի և չար վոգիների ստվերները մշուշապատեն
 նրա միտքը, հոգին, սիրտը և լուսեղեն զգացումներ ու-
 նենալու ըմբռնման ընդունակութիւնը զարգացնելու:

Անցած են միջին դարերը, բարեշրջման սրենքը մաք-
 րագործել է մարդկային իմացական աշխարհի թխպոտ
 յերկինքը, մաքրագործելու յե նաև հոգեկան աշխարհը և
 բարոյական նկարագիրը՝ մաքրագործված Քրիստոսի նոր
 յեկեղեցով: Խղճի և կրոնի ազատութիւն է արտոնված
 քաղաքակիրթ ազգերին: Ներկայումս էլ արտոնված է
 նույնը Մեծն Ռուսաստանի Խորհրդային իշխանութեան բո-
 լոր յերկրներում:

Խղճի և կրոնի անկախութեան և ազատութեան պատ-
 մական այս գործնականացումները անսլայման պետք է
 իրագործվեն հետզհետե ամբողջ յերկրագնդի վերա գո-
 յութիւն ունեցող պետութիւնների կյանքի մեջ, և ան-
 հատն ու ժողովուրդը խղճի և կրոնի անկախ և ազատ ի-
 րավունքների մեջ անձեռնմխելի պետք է լինին և այս
 անձեռնմխելիութիւնը քաղաքակիրթութեան պատմութեան
 մեծագույն նվաճումներից մեկը պետք է լինի:

Հայոց յեկեղեցին ունի դարերի կյանք, ահա իր ա-
 մենից մեծագույն և ամենից բարձրագույն և խորագույն
 արժեքը: Բայց գիտութեան և փիլիսոփայութեան նվա-
 ճումներն այլևս թույլ չեն տալ այսուհետև, վոր ներկա դա-
 րը և ապագա դարերն իրանց ուսերի վերա տանեն գի-
 ականացած մի հաստատութիւն: Պատմութեան, ժամանա-
 կի, գիտութեան և փիլիսոփայութեան անպարտելի ուժե-



րի առաջ այլևս չի կարող դիմանալ և կանգուն մնալ ժողովրդի հոգևոր աշխարհը լուսավորելու և բարոյական նրկարագիրը հղկելու անկարող յեկեղեցին, վորքան ել նրա ներկա՝ իրենք իրենց «քաղաքագետ» և այլ ժողովրդի «բարեկամ» ձևացող բարձր հոգևորականությունը ուժաստատ անե իրեն այլ յեկեղեցին կանգուն պահելու գառանցանքով:

Յեկեղեցին և կրոնը, հարմարվելով և յենթարկվելով բարեշրջման տիյեգերական որենքին, կապրե և ոգտակար կը հանդիսանա, յեթե ընդունակ լինեն նրա բարձրագույն պաշտոնյաները յեկեղեցին միշտ մշտանորոգ պահելու. ընդունակ լինեն ըմբռնելու նաև, վոր Քրիստոս իրենց բարձրագույն տիտղոսներ տված չե, այլ խոնարհագույն սպասավորություն անելու արտոնություն ե տված միայն, թե «վոր մեծն ե ի ձենջ, յեղիցի ամենեցուն ծառա» և արտոնություն՝ Ավետարան քարոզելու:

Հայոց յեկեղեցին իր դարավոր կյանքի մեջ և պատմության մեծ հուզումների և հեղաշրջումների մեջ յերբեք չի յեղել չեզոքի դերում: Ընդհակառակը, ունեցել ե միշտ իր խոսքն ասելու՝ գովեստների և դրվատների արժանի դերը: Փոքրիկ դեր, բայց խոր հատկանշանական դեր: Հայոց յեկեղեցին յերբեք լուծ չե պատմության մեջ, այլ ունեցել ե իր տեսակետը նույնիսկ հելլեն փիլիսոփայական շարժումների մեջ: Յեթե հունական և հռոմեյական յեկեղեցիներից Քրիստոսի վարդապետության վոգուն հակառակ նորմուծումներ ե մտցրել իր մեջ, դրանք յեղել են իրենից զորավոր վերոհիշյալ ազգերի զորավոր յեկեղեցիների պետերի հարկադրանք: Բայց մյուս կողմից ել, պետք ե ասել, վոչ պակաս Քրիստոսի վոգին և նրա վարդապետության իմաստները սխալ ըմբռնած մեր յեկեղեցական հայրերի թելադրանք:

Յեղել են զանազան ժամանակներում բողոքող և պահանջող անհատներ, յեկեղեցին բարեփոխելու և վերացնելու նրա մեջ ներմուծված ավելորդապաշտությունները,

արտաքին ձևական ծիսակատարությունները և կոստյաշտությունից մնացած սնտախապաշտությունները, ինչպես կրտսենեն ընթերցողները մանրամասնությունները՝ նկարագրված այս գրքույկին հաջորդող գրքույկի մեջ. բայց յեկեղեցականները՝ ոգտվելով դարերով հայ ժողովրդի մեջ մարմնացած նախապաշարումներից, իրենց սուտ ու սխալ գրչական արտահայտություններով հարձակվելով յեկեղեցու բարեփոխություններ պահանջող անհատների վրա, հերետիկոս, հերձվածող և յեկեղեցու ու կրոնի թշնամի յեն հայտարարել այդպիսիներին ժողովրդի առաջ:

Այդպիսիներից մեկն է և գլխավորը, հայտնի գիտնական և աստվածարան, Եջմիածնի կուսակրոնության ներքին կյանքին քաջածանոթ Յերվանդ Տ. Մինասյանը, վոր դեռ իր վարդապետական կոչման մեջ քաջություն ունեցավ հրապարակ յելնելու «Հայոց յեկեղեցու բարեփոխության խնդիրը» խորագիրն ունեցող գրքույկով, վորը լույս տեսնելուն պես, հրապարակով խարույկի բոցերի մեջ այրվելու դատապարտվեց: Բայց Յերվանդ Տ. Մինասյանը վարդապետությունը թողնելուց և ամուսնանալուց հետո՝ կրկին անգամ հրատարակեց, իր իրավացի բողոքներով հանդերձ, իր գրքույկը քաղաքակիրթ և լուսավոր աշխարհում չընդունված այժեյու կոպիտ և տգեղ դատապարտության դեմ:

1917 թվին Եջմիածնում յեկեղեցու բարեփոխությունների համար անպատրաստ քահանաներից և կուսակրոններից կայացած ժողովում, հավաքված ժողովականների մեջ՝ Քրիստոսի վարդապետության վոգուն հիմնովին հակառակ հարուցված խնդիրների դեմ բողոքող հանդիսացա բացառապես յես ինքս: Ժողովականները յեկեղեցու վարչական կազմը պապականության ուժեղացման հավասարեցնելու ցանկություններ և պահանջներ արտահայտեցին և կուսակրոնությունն ավելի ընդարձակելու և զորացնելու խնդիր դրին, իսպառ վերացնելու փոխարեն: Յես ինքս, կրկնում եմ, բացառապես միայնակ բո-

դոքեցի այդ ամենի դեմ, մանավանդ ուժեղ կերպով և հիմնավոր փաստերով կուսակրոնութեան ընդարձակման գորացման դեմ: Բայց լոջ այնքան քահանաները, վորքան կուսակրոն ժողովականները, զայրույթով լցված իմ հիմնավոր փաստերով արտահայտութեանների դեմ, աննպատակահարմար և յեկեղեցու համար իրենց խելքով իբր թե մնասակար գտան կուսակրոնութեան խալառ վերացումը:

Յեկեղեցու բարեփոխութեան խնդրի ձգձգելը վրտանգավոր համարելով յեկեղեցու համար և արդեն հարմար ժամանակը հասած համարելով, առանց տարուբերվելու, հանուն Քրիստոսի և Քրիստոսի վոգով տոգորված, հրապարակի վրա յեմ դնում հայոց յեկեղեցու վոջ թե չափավոր և վոջ թե մի քանի շարականների, Մաշտոցի և ժամերգութեան կրճատումների խնդիր, այլ արմատական բարեփոխութեան խնդիր: Խնդիր վերացման ավելորդապաշտութեաններ, սրբութեաններ ընդունված մասունքների, կուսապաշտութեանից մնացած սնտիապաշտութեաններ, արտաքին ձևականութեաններ, յեկեղեցականների անճոռնի և այլանդակ հագուստի, քահանաների՝ հրեական յեկեղեցուց մտած և յեպիսկոպոսների՝ հեթանոսական կրոնի քրմապետների զգեստների, կուսակրոնութեան, ամենորյա ժամերգութեաններ, վանքերի, մենաստանների, անապատների, կուսանոցների, ուխտագնացութեան և այլն, թողնելով միայն Ավետարանը, Քրիստոսը և նրա վարդապետութեան ուսմունքը: Փոխելով նաև Քրիստոսի վոգուն հակառակ, հակառակ նաև առաքելական սահմանադրութեան, յեկեղեցականութեան կազմակերպչական ներկա կառուցվածքը:


Բարեփոխված նոր յեկեղեցու վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանութեանը պետք է լինի բարեկամական և համակրական: Դասակարգային կովին պետք յեղած ժամանակ յեկեղեցին բեմից քարոզելով պաշտպանելու յե բանվորա-գյուղացիութեան շահերը, հետեւելով աղքատներին, տնանկներին, չքավորներին համակրող և

պաշտպանող և մեծատներին ու հարուստներին խարաղանող և մտրակող՝ քրիստոնեյական կրօնի հիմնադիր Քրիստոսին:

Այս գրքույկը և սրան հաջորդողները կադմեիս և խմբագրելիս ոգավելեմ հետևյալ աղբյուրներից.

1. Против попов.—Эмил Розенов
2. Предшественники христианства.—Н. А. Кун.
3. Հայոց յեկեղեցու բարեփոխութեան խընդիրը.—Յերվանդ Տ.-Մինասյան
4. Կ. Պոլիս հրատ.—«Ավետարելը» շաբաթաթերթ
5. Ամերիկայում հրատարակվող «Կոչնակ» »
6. Կ. Պոլիս հրատարակված:—Հառաջադիմութունն ճշմարիտ գիտութեամբ:

Առոս արեւաթսկոպոս



ԱՅԼ ԱՍԵՌՎ ԱԾ ԿՐՈՆ

Բավական ե մի ակնարկ գցել անցյալ անվերական-
դան դարերի մշուշի մեջ ծածկված, սև ու սխրագրեցիկ
քանդակված արձանագրությունների վերա, յերևան բերելու
վաղեմի ազգերի և ժողովուրդների համար կատարած դե-
րը կրոնների: Դարերով գիտության հորիզոնը մառախլա-
պատ ամպերի մեջ ծածկված և պարփակված, մարդկային
ընկերությունը, անգիտակից և անզգա իր բարձր կոչման,
նիրհում եր՝ կրոնական խենթ ու խաբուսիկ անուրջներով
շրջապատված ամեն կողմից: Այդ խավարամած դարերում
մարդկությունը զրկված եր ճշմարտության և գիտության
գեղափայլ ճառագայթներով կազդուրվելուց և մարդավա-
յել կյանք վարելուց և տգիտության խորին մթության
մեջ ընկղմված, դատապարտված եր լսելու ստրկական
հնազանդությամբ խավարի պաշտաման ջատագով և պաշտ-
պան հեթանոսական կրոնի սպասավորների ձայնն ու
խոսքը:

Յեվ այդպիսի մի ժամանակ տգետ, վայրենի և
զուհիկ ժողովրդի լսի բնագրումն եր միայն առաջնորդու-
ղը իրեն և վոչ ճշմարիտ իրական բնագրը, վոր բնու-
թյունն ե ներգործում դարգացյալ մտքերի, հոգիների և
սրտերի ծալքերի խորքերի մեջ: Հին դարերի մարդկու-
թյան բնագրը արդյունք եր ահի և սարսափի, վորոնցով
սպառնում եյին հեթանոս կրոնի պաշտոնյա քրմերն ու
քրմապետները: Ահ ու սարսափի հետ դուզընթաց եր նաև

քրմերի և քրմապետների հմայքների և թովչությունների պատրանքները, վորոնք առավել ևս ազդեցիկ եյին և հզոր, քան յերկյուղն ու սարսափը:

Յեւ այսպես հին-հին մթին դարերի վաղեմի ազգերը և ժողովուրդները, իրենց բովանդակ զգացումները քրմերին ու քրմապետներին հանձնած և խոնարհված նրանց թովիչ լուծի տակ և նրանց վտաքերի առաջ ծնրադրած, իրրև հլու հպատակ նրանց հրամանների և սպառնալիքների, նրանց ազդեցութեան տակ սերունդեսերունդ ծնված, սընված և ապրած, ժառանգական մի ախտ եր դարձել կրոնի այլանդակ հավատալիքները:

Շատ պարզ է ուրեմն, վոր կրոնը իշխող եր, և տգիտութեան մեջ խարխափող ժողովուրդը կրոնի հպատակ եր կուրորեն, և կրոնն եր միահեծան տերն ու իշխողը տիեզերքի և կայսր կայսրների: Յեւ այդ աներևույթ կայսրը, բազմած իր դահի վերա, Ոլիմպյան բարձունքներից դողացնում եր աշխարհն ու մարդկութունը իր շանթարձակ վորոտումներով և զարհուրեցնում եր ազգեր և ժողովուրդներ: Յեւ կրոնը, վորի կեղծ նշանաբանն եյին դարձրել քրմերն ու քրմապետները «նվիրականութուն», թնկարող յեղավ շինարար դեր կատարել և դիտութեան հետ համընթաց լուսավորել ու զարգացնել մարդկային խոսքան միտքը և մեղմացնել ու ազնվացնել անզգայացած և քար դարձած զգացումները: Հետևապես մարդկային ցեղի յերջանկութեան և բարորութեան փոխարեն՝ դարձավ մնասաբեր կրոնը, վորի յերդվյալ սպասավորները, ողտվելով իրենց բարձր ու վես դիրքից և ժողովրդի խորին տգիտութունից, հաղթահարելով անապատների մեջ յերևացող ովազիսների նման իրենց դեմ հանդես յեկող դիմադրիչ թույլ ու ժերին, պաշտել եյին տալիս նույնիսկ իրենք իրենց և իրենց կամքն ու քմահաճույքն ընդունել տալիս ակնածու և յերկյուղով լի հնազանդութեամբ՝ տրգետ և խոնարհամիտ թշվառ ժողովուրդներին:

Ճարպիկ վարպետ եյին բերթող քրմերն ու քրմա-

պետները, ճարպիկ եյին միանգամայն իրենց խաբուսիկ
և շահագործող արվեստի մեջ, Գիտեյին բանաստեղծական
վոճով մարդկային միտքն ու զգացումներն ընդարմացնել
և շաստվածների ու շաստվածուհիների թմրեցուցիչ օլտա-
դամներով հրապուրել և կամ սպառնալից հրամաններով
ահաբեկել և կամ վողոքիչ արտահայտությամբ հանկու-
ցանել իրենց հլու հպատակ թշվառ ժողովրդին, վորոնք
կրոնի պաշտոնյաների ներգործիչ ազդեցության յենթարկ-
ված, մարդիկ նույնիսկ իրենց բանականության և իսկա-
կան մարդեղության վերա զազափար անգամ չունեյին, և
մարդկության ամենավսեմ հատկանիշը, յեթե վոչ լիովին
ազատագործություն, դեթ ազատախոհությունն անգամ
զոյություն չուներ և գերի ու ստրուկ եր դարձած ժո-
ղովուրդը ամեն կողմից հեթանոս կրոնի սպասավորների
զործ դրած կեղծիքների և խաբերայությունների, և ժո-
ղովրդի բախտը կախված եր քրմերի և քրմապետների
կամքից և քմահաճույքից:

Բայց չը պետք է ուրանալ նաև, վոր այդ սևաքող
դարերում յերևան յեկան նաև, ինչպես անապատների
ովադիսներ, վսեմ և բանիրուն անհատներ, վորոնք
բարոյականության ճշմարիտ առաքելության կոչումն ու-
նենալով, ամեն կերպ ջանք և ճիգ գործ դրին վայրենի,
տղես, անընտել և մարդկային միտքը կաշկանդող հեթա-
նոսական կրոնին գերի դարձած ժողովրդին մարդկային
ընկերության, յեղբայրության ճշմարիտ և ողտակար զա-
զափարներ ներշնչել և բանական արարածին արժանա-
վայել կանոններ ու հրահանգներ ավանդել և իրենց ժա-
մանակի հասկացողության և ըմբռնման չափով կաղապա-
րել և դաստիարակել մարդկային միտքը, կրթել և ազ-
նալացնել զգացումները, մաքրել սիրտը և ճշմարիտ ու
մաքուր սիրո բոցով բոցավառել մարդկային հոգու մռայ-
լածավալ խավերը և առաջնորդել դեպի մարդավայել իս-
կական կենցաղը:

Բայց տգիտության և խավարի մեջ ընկղմված զգա-

յագուրկ և գծուծ նախապաշարումներով վարակված ժողովրդի համար այդ որինակ վեհանձն մարդկանց յերևան գալը վոչ այլ ինչ էր, յեթե վոչ՝ մի ճրագ միայն, վոր հազիվ կարող է ազոտ լուսով լուսավորել իր շուրջը միայն: Մեծ բարեբախտություն կըլիներ, յեթե գոնե այդ ճրագները հարատև լինեյին: Բայց ինչ է արդյոք աննշան պղպջակի կյանքը համատարած ովկիանոսի համար, կամ ասուպի տեղությունը անհունության մեջ և կամ, պարզ ասած, լուցկու կյանքը, վոր բոցավառվելուն պես հանգչում է բռնաշոճնչ քամուց: Այսպես նաև մի կողմից Արամազդի շանթերը, դարբնած կիկոպայից, մյուս կողմից բռնավոր և բարբարոս իշխողների թրերն ու սրերը, արյունով և արհավիրքներով դողացնելով համայն աշխարհն ու մարդկությունը և չեզոքացնելով յերևան յեկող և բարեկարգիչ հանդիսացող անհատներին, հլու հպատակության մեջ եյին պահում սարուկ և գերի ժողովրդին գեպի իրենց ձեռնառու կրոնը:

Մինչև անգամ հեթանոս աշխարհի կրոնը դիմակ էր յեղած ամենաստորին անբարոյականության: Տաճարների քրմուհիները պոռնիկներ էյին և պոռնկությունը բացարձակ էր: Յերբ մոլությունն առանց ամոթի հրապարակով է կատարվում, դժվար չե յերևակայել, թե ինչ աստիճանի հասած կը լիներ տաճարների սպասավորների և սպասավորուհիների բարոյական ապականությունը: Ստրարոն պատմաբանն ասում է, վոր կորնթոսի Աստղիկի մեհյանի մեջ հազարից ավելի պոռնիկներ կային, վորոնք մեծ առանձնաշնորհումներ էյին վայելում: Քաղաքի ուխտավորների ուխտերը և աղոթքներն ու նվերները նրանք էյին մատուցանում չաստվածուհուն:

Նույնն էր նաև իրերի վիճակը Սիկիլիայի մեջ գանըվող Երիքսի մեհյանի մեջ, ուր մինչև անգամ հռովմեյական հիւպատոսներ և սրբատորներ մասնակցում էյին անառակության: Ապականությունն անշափ մեծ էր շնորհիվ կրոնի, վոր հռովմեյական կառավարությունը կարևոր

համարեց մասնավոր որենքներ հաստատել բարձրաստի-
ճան կանանց համար, արգելելով նրանց իբրև հանրակին
արձանագրվելու, վորոնք ձգտում էին հանրակին դառնա-
լու, անսանձ կերպով հաղեցնելու իրենց ցանկալան կըր-
քերը քրմուհության կարգը մանելով տաճարների մեջ:

Ժողովրդի ժամանցներն ու հաճույքները ապականու-
թյան անդնդին էին հասած, վորոնք անընական էին դար-
ձրել և մարդկային ճաշակից բոլորովին դուրս յեկել իրենց
կըքերին բավարարություն տալու համար անընական և զազ-
րելի յեղանակներով և ձևերով: Պարզ և մարդավայել զբոսանք
ներ հրապույր չունեին նրանց համար: Վոչ մի բան չեր հետա-
քըքում և վոչ վոքի, յեթե նրանց մեջ չեր լինում ա-
րյունհեղության տեսարան: Բարձր և խոնարհ, հարուստ
և աղքատ համախմբվում էին ամփիթատրոնների մեջ
դիտելու գլադիատորների գազանանման մաքառումները
միմյանց անշնչացնելու համար: Գլադիատորները մարդ-
վում էին կրկեսների մեջ գանվող տարբեր մարզարան-
ների մեջ, և մեծ տոների առիթով ստիպում էին նրանց՝
միմյանց ջարդել և այդ կերպով հաղեցնել արյան անընա-
կան ծարավը հանդիսատեսների:

Յեվնման ընդհանրացած սովորությունների վրա վորոնք
ամենից ավելի անբարոյացուցիչ ազդեցություն էին գոր-
ծում հանրության վրա, տալով նրանց որեոր անասնա-
կան խառնվածք և թատերախաղերի լկտի ներկայացում-
ների հանգամանքները, վորոնք առաջնորդում էին հան-
րության բարոյական անկման, վոչ միայն մատների ա-
րանքով էին նայում հեթանոս կրոնի մեծ ու փոքր պաշ-
տոնյաները, այլ նույն իսկ ջատագովվում էին իրենց կող-
մից և մասնակցում էին իրենք ևս:

Հեթանոս կրոնի շրջանի գրականությունը, շնական
եր և պոռնկական պատկերների ամենից ամոթալի խայ-
տառակ նկարագրություններով լի: Ժողովրդային զանգ-
վածները բոլորովին անուս և տգետ էին և նրանց կըր-
թության համար վոչ մի միջոց չեր ձեռնարկվում, վոչ

կրօնի պաշտօնյաների կողմից և վոչ էլ կրօնին ստրուկ և հլու հպատակ դարձած պետութեան կողմից:

Քաղաքացիների մեջ բնակչութեան մեծ մասը բաղկանում էր ստրուկներից, վորոնք համարվում էին իրենց տերերի ստացվածքը: Ստրուկների տերերը կարող էին իրենց ստրուկներին ծեծել, շարշարել և վոչնչացնել անշընչացնելով, և որենքը տվել էր նրանց այդ իրավունքն ու արտոնութեանը: Ստրուկները իբրև դոնապան շղթայակապ դրվում էին դոնների առաջ, ինչպես պահապան շներ: Գիշերները բոլոր ստրուկները պահվում էին ախոռների մեջ անասունների հետ և անասունների պես խարազանվում էին թե ներս տանելիս և թե դուրս բերելիս և նշաններ էին դրվում նրանց վրա և խաչվում՝ ամենաթեթև սխալի համար անգամ: Ծերերը և ախտացյալները լքվում էին և անշնչացվում էին անխղճաբար, այնպես՝ ինչպես մարդիկ անշնչացնում են վայրի գազաններիին:

Ստրուկների սոսկալի կոնիվները հաճույք էին պատճառում իրենց տերերին և ծայրահեղ հուսահատութեան մղված ստրուկները ճար ու հնարավորութեան շունեյին աղատվելու այդ սոսկալի դրութեանից: Յեվ այդ ժամանակի ընդհանուր պատկերը ստրկութեան՝ ծայրահեղ անզթութեան և շարիքի պատկեր է ներկայացնում: Ստասիրտ յեսամոլութեան անզթութեանը գերազանցում էր միայն գեղխութեամբ և անբարոյութեամբ: Ամեն բան շարութեամբ և անիրավութեամբ լի էր: Ավելի վոճիրներ էին գործվում, քան ինչ վոր կարելի էր դարմանել խոսքով և բարոյական նկարագրի որինակով, և շարութեան և ամեն տեսակ անիրավութեան հրեշային գործողութեանները շարունակվում էին անգուսպ կերպով: Մեղքի և մոլութեան և բացարձակ հրապարակային անառակութեան ցանկութեանը ավելանում էր որեոր և ամոթի ու պատկառանքի զգացումը նվազում: Բարի և պատվարեր յեղած ամեն բաների հանդեպ ամեն նկատում մոռացված, ան-

սանձ կրքերի հաճույքը խռովահույզ կերպով վազում
 եր անգուսպ: Չարիքը ինքն իրեն չեր ծածկում այլ ևս,
 այլ բոլորի աչքերի առաջ ցցվում եր հայտնապես: Անի-
 րավությունը այնչափ ժողովրդական եր յեղած և բոլորի
 սրտերի մեջ այնչափ հզորապես բռնկված, վոր անմեղու-
 թյունը ամենանվազ չափով անգամ չեր գտնվում, այլ
 բոլորովին դադարած եր գոյություն ունենալուց: Ներոն
 կայսրի ժամանակ Սենեկան Հռովմում իր գրած հիշատա-
 կարանների մեջ խորին զգվանքով ե նկարագրում Ներո-
 նի կայսրության ժամանակվա հեթանոս կրոնի քրմերի,
 քրմուհիների, քրմապետների ծայրահեղության հասած
 դարշությունները և ժողովրդի ապականյալ վիճակը:

Թշվառ և վողորմելի ժողովուրդը, մարտիրոսության
 բազնի վրա տարածած իր անգոր բազուկները հանուն
 կամածին և ինքնահնար կրոնի և հանուն քմահաճ որենք-
 ների, իր որհասական կյանքով տառապում եր հոգով և
 մարմնով: Թեև յերկար տևեց այդ ճգնաժամը, բայց վեր-
 ջապես նրանց լուին, բայց ազդու աղաղակի արձագանգը,
 յերկնքի բարձունքները դղրդելով և Անհունի ու Հավիտե-
 նականի գահույթի շուրջը պտտելով, յերկինքը յերկունքի
 մեջ մտավ և ընդունվեց հեք ու թշվառ մարդկության ու-
 դաղակի արձագանգը և արձագանգեց Բեթղեհեմի խորքե-
րից յերկնառաք ավետիսը, թե յխաղաղություն յերկրի
վրա և հաճություն մարդկանց մեջ:

Փայլատակեց յերկնքի գահույթից Բեթղեհեմի վրա
 յերկնացնցուղ ճաճանչափոր բոցը, վորի ճառագայթարձակ
 ցոլացումը Ուխտապահից ևս առավել գերազոր, յերկնքի
 կիկլոպներից դարբնած շանթի փայլատակումը սարսա-
 փահար արեց քրմերին և բռնավորներին, իսկ որհասա-
 կանները, գերբնական զորությամբ ներշնչված և վողե-
 վորված, խայտացին և ցնծացին փառքի ովսաննաների վո-
 բորնդոստ ձայներով դիմավորելով յերկնառաք մեծ ու-
 սուցչին:

Այդ ճառագայթարձակ լույսը արդարության և ճշ-

մարտութեան արեգակն եր՝ Քրիստոսով աշխարհ յեկած, վորի շողշողուն փայլով և վորի լույսի ճառագայթների շնորհիվ մի մեծ և աննման հեղաշրջում կատարվեց աշխարհի վրա և վորի աննման ազդեցութեան ներգործութեան գորութեամբ պեսք և դադարեցին հեթանոս աշխարհի սպառնալից շանթերը, պետք և վիշրվեցին և ջախջախվեցին հեթանոս կիկլոպների մուրճերը, պետք և ջարդվեցին և անպետքանային բռնավորների սրերն ու թրերը և կայսրների հուժկու գավազանները, պետք և վայր ընկնեցին նրանց արքայական թագերը և գայիսոնները և սասանեցին իշխանագունները իրենց վեհապետական լաթոնների վրա և սուգվեցին մեծամեծները իրենց վես բարձրութեանից Սաղիմայի աշտարակների վրա ազատաշարժ ծածանվող այն լուսափայլ դրոշից, վորի վրա գերբնական մատներով և յերկնային տառերով արձանագրվեցին «խաղաղութեան, յեղբայրութեան, հաճութեան» Քրիստոսի վարդապետութեան նշանարանները: Յեւ այդ նշանարանների ընդհանրացումով պետք և կատարվեց Յեսայա մարգարեի կանխասած գուշակութեանը, թե՛ «Յեւ ձուլեսցեն զբուսերս յուրյանց ի խոփս և զսուրնս յուրյանց ի մանգաղս և վոշ ևս առնուցու ազգ յազգի վերա սուր և վոշ ևս ուսանիցին տալ պատերազմ, զի լցցի յերկիր ամենայն գիտութեամբ Տյառն և հանգույն գետոց բղխեսցե խաղաղութեան ի ծագաց յերկրի մինչև ի ծագս յերկրի և ցնծասցեն հանուն նորա ամենայն ազգք և ազինք»:

Ազգերի և ժողովրդների հարստահարիչները վինվեցին մարդկութեան յերկնառաք բարեկամի դեմ, հակակիր խորհուրդներ տածելով և բազմազան դավադրութեաններ նյութելով նրա դեմ: Հրեյից կղերը, քահանայապետներն ու քահանաները, դպիրներն ու փարիսեցիները, իրենց փառքի և մեծութեան, իշխանութեան և տիրապետութեան անկումը նախատեսելով Քրիստոսի քարոզած գաղափարներով, խաչեցին, վորից հետո հեթանոս աշխարհի կայսրները, Քրիստոսի վարդապետութեան առաջիտղացութեանը տես-

նելով, կատաղի բարկությամբ լցված, աշխարհի վրա չը տեսնված ու չլսված հալածանքներով հալածեցին թե քրիստոնեյություն քարոզողներին և թե հետևողներին: Ամեն մարդկային գորություն գործ դրվեց և ամեն միջոց փորձվեց առաջն առնելու, բայց հոսանքը հետզհետե հասավ Յեզրոսպա, Ասիա և Աֆրիկա և մինչև ուր ել վոր հասավ Քրիստոսի Ավետարանի նոր քաղաքակրթության քարոզի ձայնը, խոնարհվեցին և մտան բոլորն ել նրա պայծառափայլ դրոշի տակ, և նրա խաչի վրա թափած անպական արյունը փրկեց և ազատեց իրեն հետևողներին այլանդակ անուտիապաշտություններով լի հեթանոսական կրոնի ստրկությունից և բարոյական ապականությունից:

Տգիտության և խավարի մառախուղը ցրվեց և դարավոր սև վարագույրը պատռվեց, վոր ծածկված եր պահում դարերով ճշմարտության գիտությունը մարդկային սեռից: Ինցարանական նախապաշարումներով ժանգոտած կափարիչը վերացվեց և կոապաշտության բազմադարյան բազինների և մեհյանների հիմքերը շարժվեցին՝ անեղ շարժմամբ կործանվելով: Բայց ժողովրդի ալիքների մեջ թափանցած փրկության հավատքը և հոգեկան ներքին աշխարհի լուսավորությունը Քրիստոսի քարոզած պարզությամբ, մաքրությամբ և ճշտությամբ հարատեևեց արդյոք: Յեթե աղավաղված քրիստոնեյությունը այսքան բարիքներ առաջ բերեց աշխարհի վրա, վորոնց ուրանալը և ժխտելը անբարեխղճություն կըլինի, վորքան ևս առավել աննման բարիքներ առաջ կըբերվեր, յեթե Քրիստոսի վարդապետությունը՝ առանց աղավաղվելու քարոզվեր և յեկեղեցին չդարձնեյին քրիստոնեյության պաշտոնյաներ համարվող կղերները իրենց համար շահագործության աղբյուր և փառամոլության առարկա միայն և բոլորովին բարձի թողած Քրիստոսի ավետարանի քարոզության ձայն հնչեցնելու յեկեղեցու բեմը, Քրիստոսի իսկական վարդապետության քարոզությունն եմ ասում, իր մաքրությամբ, իր պաշտությամբ և իր ճշ-

14299

A 23815

տությամբ, ծառայեցնեյին յեկեղեցու բեմը, այդ ուսուց-
 ման բեմը, այդ Քրիստոսի ուսմունքն ավանդելու բեմը,
 այլ և այլ անշահ և անոգուտ, ժողովրդի միտքը, հոգին և
 սիրտը վոչ կրթող և վոչ դաստիարակող ձևերի և գործո-
 գությունների համար: Յեվ Քրիստոսի վարդապետու-
 թյունը քարոզելու և տարածելու վսեմ կոչումն ու պաշ-
 տոնը, վոր կղերի առանձնաշնորհումը դարձավ, այդ կը-
 տակակատար առանձնաշնորհյալ պաշտոնյաները կատարե-
 ցին արդյոք կտակարարի կամքն ու հանձնարարությունը,
 թե՛ քարոզեցեք և ուսուցեք զամենայն՝ վոր ինչ պատվի-
 րեցի ձեզ»: Յեթե յաջորդաբար բրիստոնեյական յեկեղե-
 ցիները առաջ տանեյին Ավետարանի քարոզությունը
 ճշտությամբ, առանց աղավաղելու Քրիստոսի բուն և իսկա-
 կան ուսմունքը և կատարած լինեյին Քրիստոսի կտակը,
 թե՛ ուսուցեք զամենայն, վոր ինչ պատվիրեցի ձեզ»,
 յերկիրը յերկինք դարձած կլիներ և յերկրաքաղաքացի
 մարդը՝ յերկնաքաղաքացի: Բայց ավանդ, յեկեղեցիների
 պետերը և ամեն կարգի և աստիճանի կղերները և նույն-
 իսկ բյուզանդական կայսրները դարերով զբաղվեցին
 իրենց քմահաճույքներով հեթանոսական ավելորդապաշ-
 տություններ և անտիրապաշտություններ մտցնելու յե-
 կեղեցու մեջ և շեղվելով յեկեղեցու հիմնադրի քարոզած
 գաղափարներից, ծեսերի, արարողությունների, պատ-
 կերապաշտության և վոսկրասպաշտության բազիններ դարձ-
 րին Քրիստոսի ուսմունքը ավանդելու յեկեղեցու բեմը:
 Հոովմեյական յեկեղեցու պապերը, արքաները, արքասուհի-
 ները, այդ իրենց «սրբակրոն» ու «կուսակրոն» հըռ-
 շակող բոլոր տեսակի կղերները, տաճարները բազինների
 վերածած, սոսկալի յեղեոնագործություններ կատարե-
 ցին, իբրև հերետիկոսների և հերձուածողների նահաաա-
կելով և խարույկների զոհ դարձնելով իրենց կամքին և
քմահաճույքին չենթարկվողներին: Յեվ ինչե՞ր չկատա-
րեցին Հոովմի յեկեղեցու պետի «աշխարհակալական» և
«անսխալական» այլանդակ և հակաքրիստոնեյական ձրդ-

տուճները իրագործել տալու համար: Հռովմեյական յեկեղեցու կղերը հեթանոս կրոնի քրմերից և քրմապետներից ել իր գործած վայրագություններով և բարբարոսություններով գերազանցեց, մանավանդ յեզվիտ կարգի կրոնավորները:

16 ըդ դարու կրոնական մեծ հեղաշրջումը Յեզուայում մի հսկա վկա յե հանդիսանում Հռովմեյական յեկեղեցու պապերի և կղերի ձեռքով թափված անմեղների արյան և Արելի արյան նման բողոք և բարձրացնում առ Աստված, վորի անունը շահագործելով. մեղքի թողության տոմսեր եյին վաճառում նույն իսկ դրամով արքայություն ներս մտնելու. իբավունք տալու համար: Քրիստոնեյությունը, վոր սիրո և յեղբայրության ու հավասարության կրոն էր, թյուրեցին, խժբժեցին, և կղերը, վոր Քրիստոսի վարդապետության համար սահմանված պաշտոնյաներ եյին, իրենց անարժան գործելակերպով, իրենց «կուսակրոն» ու «սրբակրոն» ուխտելով և հռչակելով, աշխարհիկ մարդկանց մեջ նույն իսկ շրտեսնված պղծություններով, Հեղիի վորդոց նման տեղի տվեցին զազրելի ապորինություններ և ցոփակեցության և անպատվեցին ու վարկարեկեցին այն խաղաղության, յեղբայրության, հավասարության և հաճության կրոնը, վոր նվիրագործված էր Քրիստոսի արյամբ և իրենց գայթակղեցուցիչ կենցաղով սառցրին և զզվեցրին ու բաժանեցին իրենցից ժողովրդի լավագույն և մեծագույն մասը:

Յեւ այսպես, կրոնի պաշտամունքը, վոմանք դիմակ, վոմանք գործիք, վոմանք արհեստ և վոմանք միջոց գործ դրին իրենց զգայական ցանկություններին հագուրդ տալու համար, և թույլ արվի և ներվի ինձ ընթերցողներից ասելու և արտաքուստ սուրբ և ներսից գարշահատությամբ լի և ցոփակյաց Քրիստոնեյական յեկեղեցու կղերներին ուղղելու Սողոմոնի տաճարի բեմից սուտակասպաս, հացկատակ և կեղծավոր ու խաբեբա հրեյական կղերներին Քրիստոսի ուղղած վայերը: կղերներին, վորոնք այս 20-


րդ քաղաքակիրթ և լուսավոր դարումն անգամ քրիստոնեյության անունով Աստուածաբանական գիտությունները դարձրել են շահամուտության միջոցներ, հիմնովին հակառակ քրիստոնեյության հիմնադրի նվիրական նպատակին: Յեւ իմ առաջ բերածները յենթադրություններ ու բանդագուշանքներ չեն, այլ ստույգ իրողություններ են, և վորքան փաստեր կարելի յե առաջ բերել, փաստեր, վորոնք ապացույցներ են կրօնի այլասեռման և իրենց՝ կրօնի պաշտոնյաների անարժան կենցաղի:


Յեւ թե ի՞նչ հետևանք ունեցավ յեկեղեցու կղերների զգվելի և նողկալի պղծությունները և հեթանոս կղերներից ել գերազանցած վատթարագույն արարքները, այդ արդեն հայտնի յե Հռովմեյական յեկեղեցու դեմ բռնկված 16 ըզ դարու կրօնական մեծ հեղափոխության հիշատակաց արժանի տարուց, յերբ Հռովմեյական յեկեղեցուն գերի և ստրուկ դարձած ժողովրդի մեծագույն և լավագույն մասը թոթափեց տգիտության թանձրամած խավարը, փշրեց սնտրիապաշտության և ավելորդապաշտությունների թմբերը և փշրեց ու ջախջախեց հոգևոր ստրկության ծանր շղթաները և սթափվելով ու բացելով իր աչքերը և տեսնելով այդ յեկեղեցու պաշտոնյաների մեջը և շուրջը շեղջակուտված պղծությունները և խաբեբայությունները և յեկեղեցումն ել հակաքրիստոնեյական այլանդակ յերկրագության ձևերն ու յեղանակները, թեքեց իր յերեսը նրանից և ստեղծեց իր համար նոր յեկեղեցի, կենդանի յեկեղեցի, վոր իր պարզությամբ, ճշտությամբ և մաքրությամբ և քիչ թե շատ Քրիստոսի Ավետարանի վողուն հարմարցրած՝ բավարարում և Հռովմեյական յեկեղեցին թողած ժողովրդի հոգեկան աշխարհի պահանջներին և արհամարհանքով ու զգվանքով և խորշում հին յեկեղեցուց, այն է՝ Հռովմեյական յեկեղեցուց և նրա հին կղերից:


Արդյոք պետք է անդրադառնան այդ կատարված իրողության ցոնկալի արձագանքը և ժամանակը չի՞ հասել

արդյոք անդրադառնալու նաև արևելյան մյուս ուղղա-
 փառ կոչված, բայց վոչ ուղղափառ, այլասեռված յեկեղե-
 ցիներին, վորոնց թվում նաև մեր հայկական յեկեղեցուն
 և կարիք չունի արդյոք մեր նեխած յեկեղեցին հիմնա-
 կան վերափոխման: Այս կարևոր խնդրին կը ժողովնամ
 հետզհետե հաջորդաբար: Թեև պետք է ասած, վոր թերևս
 հնամուկներին զառանցանքներ թվան, բայց և այնպես,
 վաղ թե ուշ 16-րդ դարու Յեվրոպական կրօնական շար-
 ժումը և բարեշրջումը նպաստալից անդրադարձով պետք
 է արձագանքե նաև մեր ժողովրդի մեջ՝ մեր հայկական
 յեկեղեցու հակաքրիստոնեյական և ոտար յեկեղեցիներին
 ներմուծված սրբերը, սրբությունները և ծիսակատարու-
 թյունները դուրս շարտելու և յեկեղեցին իր նախնական
 պարզության վերածելու իր դավանաբանական և վարդա-
 պետական ու վարչական մասերով, վորի որինակը վեր-
 ջերս տվել է Ռուսական նորակազմ կենդանի կոչված յե-
 կեղեցին, վորի հետևողների թիվը, ինչպես լավում է,
 ստվարանում է հետզհետե:

ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԲԱՎԱԿԱՆԱՆԱԼ ՆՐԱՆՈՎ, ԻՆՉ
 ԱՐՎԵՑ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ: ՀԻՄԱ ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ
 20-ՐԴ ԼՈՒՍԱՓԱՅԼ ԴԱՐՈՒՄ, ՄԻ ԴԱՐՈՒՄ ՎՈՐԸ
 ՍԿՍՎՈՒՄ Ե ՀՆԻ, ՓՏԱԾԻ, ՆԵԽՎԱԾԻ ՔԱՆԴՈՒՄՈՎ,
 ՎՈՐԸ ՅՂԻ ՅԵ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՍՍԱՍԱՆ ԲՈՆԿՈՒՄՆԵՐՈՎ,
 ՅԵՎ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՅԵ ՅԵՎ ԿԵՐՏԵԼՈՒ ՅԵ ՆՈՐԸ ՅԵՎ
 ՅԱՆԿԱԼԻՆ: ՄԵՆՔ պետք է ՍՏԵՂԾԵՆՔ ՆՈՐ ՅԵԿԵՂԵՑԻ,
 ԿԵՆԴԱՆԻ ՅԵԿԵՂԵՑԻ, ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵԿԵՂԵՑԻ: Յեվ ամե-
 նայն յերաշխիք կա, վոր կրօնասեր հայ ժողովուրդը
 ցնծությամբ և ուրախությամբ ընդառաջ կերթա նոր,
 կենդանի և Քրիստոսի ճշմարիտ յեկեղեցու կառուցման,
 վորով ցույց կըստ հայ ժողովուրդը իր հասունությունը
 տիյեղերական սրենք ընդունված բարեշրջման գաղափարի
 ըմբռնման:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003138

064.

A $\frac{\text{II}}{23815}$

9122 b 30 400.